

ՊԱՏԱՌԱՅԻՆ ԿԱՐՈՅ ԱՆՁԻՆՔ

**Ապկէ Երեք տարի առաջ լրադրաց**  
**մէջ կարգացինք որ Ֆլորենցա քաղաքն**  
**երիտասարդ մը ուղելով աճպարարաց**  
**նմանիլ՝ պատառաքաղ մը կլլեր է։ Քիչ**  
**ժամանակ ետքը բարիզ ալ սոյնպիսի**  
**դէպք մը հանդիպեր էր, ուրիշ երիտա-**  
**սարդ մալ նոյնաէս ուղելով աճպարա-**  
**րաց նմանիլ ինքն ալ պատառաքաղ մը**  
**կլլեր է։ Խոտիշոյ ու Գաղղիոյ թժիշկնե-**  
**րը և վիրաբոյժները շատ աշխատեցան**  
**հանելու այն պատառաքաղները, և գրե-**  
**թէ ամեն օր նոյն ժամանակուան լրա-**  
**գիրը կը խօսէին պատառաքաղ կլլող այս**  
**երկու երիտասարդաց վրայ։ Սակայն**  
**ետքը ետքը տեսնելով որ այս օտար**  
**մարմինները կարելի չէր անոնց ստա-**  
**մոքսէն հանել, բոլորովին լոեցին, և**  
**շատերն ալ այնպէս կարծեցին որ այս**  
**պատառաքաղ կլլողներն իբր թէ խա-**  
**բէութիւն մը բրած ըլլան։**

Եւ ահա այս տարի, 1876 ապրիլի  
 26, Բարիկու գիտութեանց ձեմարա-  
 նին առջև պատառաքաղ մը ներկայա-  
 ցաւ. և էր այն գաղղիացի երիտասար-  
 դին ստամփսէն յաջողութեամբ հա-  
 նուած պատառաքաղը։

**Լապէ (Labbé) գաղղիացի վիրաբոյ-**  
**ժը հալորդեց Բարիկու ձեմարանին իր**  
**մէկ թիշտակապիրը (Mémoire) որու-**  
**վայնահատութեան (gastrotomie) վրայ՝**  
**ստամփսէն հաստատուն մարմին մը**  
**հանելու համար. իրաւ առաջին անգա-**  
**մը չէր որ այսպիսի անդամահատու-**  
**թեանց փորձեր կ'ըլլուէին, արդէն հա-**  
**նուեր էին ստամփսէն բազմաթիւ մար-**  
**միններ. սակայն այս անգամ պատա-**  
**ռաքալը կը ներկայանար անդամահա-**  
**տին ծանր պարագայի մը մէջ։ Ակւա-**  
**ները թափանցելով հիւսուածոց մէջ,**  
**պատառաքաղը ստամփսին կողիցը բե-**  
**ւառեր էր, որով աւելի կը գմուարա-**  
**նար անոր հանութիւ։**

Պատառաքաղ կուլ տուող երիտա-

սարդին արկածը՝ կամ լու և դժբաղ՝  
 դումինը, պատահեցաւ 3 մարտի 1874.  
 այն առեն 18 տարուան էր ճաշէն ետքը  
 կը զուարճանար աճպարարաց ձեւեր ը-  
 նելով, և խոստանալով որ դգալ և պա-  
 տառաքաղ կրնայ կուլ ասլ, Այն երկայ-  
 նաձև առարկաները կոկորդն 'ի վար  
 կը մլէր, և այնպէս բերնին մէջ կը պա-  
 հէր զանոնկ : Իրիկուն մը երբ ոռուլց  
 պատառաքաղ մը նոյնպէս կոկորդէն  
 վար մլած կեցեր էր, բարեկամ մը զին-  
 քը ծիծաղեցուց, երիտասարդն յան-  
 կարծական շարժմամբ մը կլլեց պա-  
 տառաքաղը, որ արձակ ճամբայ գտնե-  
 լով իր բնական ծանրութեամբը կոկոր-  
 դէն վար գնաց : Քովինները շուտ մը  
 վագեցին լըբէր (Lepère) անունով ըր-  
 ծիշկը կանչելու, որ խորաշափ գրոծի-  
 քով (sonde) ջանաց բռնել պատառա-  
 քաղը, և իրաք ալ բռնեց ու այնպէս քա-  
 նի մը վայրկեան նոյն տեղը պահեց:  
 Դժբաղզարար երիտասարդին շարժ-  
 մունք մը ձեռքէն փախցուց զայն, որ  
 ըսուրովին վար իջաւ մնաց Սկսաւ վախ  
 տալ խղդուելու, սակայն չնչափողին  
 կծկելովը կամաց կամաց պատառաքա-  
 ղը սահեցաւ ու գնաց ստամփսին մէջ  
 իրեցաւ։

Ցետ առաջին նեղութեանց երիտա-  
 սարդը քիչ մը հանգստացաւ. երկրորդ  
 օրը Լապէ բժիշկը խորաշափ գրոծիքով  
 քննեց տեսաւ. որ պատառաքաղն ստա-  
 մփսին մէջն էր, և իրեն տեղ բացեր  
 էր ու բոլորովին հանգչեր կեցեր էր։  
 Երիտասարդն ալ քիչ քիչ վարժեցաւ  
 և իր սովորական կերպն առաւ։ Միայն  
 ստամփսին մէջ ծանրութիւն մը կը  
 զգար, ուրիշ ամեն նեղութիւն դադրե-  
 ցաւ. բայց սեպտեմբերի մէջ ստամփսի  
 ցաւերը նորէն սկսան. մանաւանդ կե-  
 րակոր ուտելէն ետքը Եւ այս նեղու-  
 թիւնները միջոց կիջոց կը նորոգուէին և  
 երթարով ծանրացան : Հիւանդն ստի-

պուեցաւ թողլով իր զբաղանքն ու Պուրկները գնաց, ուր շարունակ մէկ մը գէշ, մէկ մը լսաւ կը զգար : Տասնուշինդ օր անրնդհատ կը ներդուէր . ետքը ցան յանկարծակի կը կտրէր մինչև ուիժ օր, վերը նորէն կը բռնէր իրեն խորհուրդ տուին որ լիոն երթայ խորհրդակցելու ծանուցեալ բժիշկի մը հետ . ինքն ալ գնաց ու հօն մասց ամփս մը , Քիչ մը ժամանակ ցաւերը դադրեցան, դարձաւ Բարիզ, ու սկսաւ իր օրական զբաղանացն հետ ըլլալ Բայց անցեալ հոկտեմբերի սաստիկ ցաւերու մէջ ընկաւ և նորէն զիմեց բժիշկներուն:

Ցաւերն երթալով կը սաստիկանային. կը վախցուէր մօտալուտ վախճանը : Հիւանդին բարյոյականն ու ֆիբդականն օրէ օր տկարանալու վրայ էին: Լապէ բժիշկը չօշափեց փորը և զգաց որ պատուաքաղին ակրաները ստամիքսին գործուածներուն մէջ խրեր էին, որ գրեթէ մատին տակը կու դային : Ուզեց հանել ստամիքսէն այն պատուաքաղը : Խորհրդակցեցաւ. Կոսըլէն (Gosselein) և Լառէյ (Larrey) անուանի բժշկապետաց հետ, և մէկտեղ որոշեցին կատարել այս գործողութիւնը : Ստամիքսին մինչև խորն հասնելու համար պէտք էր ընտրել կամ կիզողական գեղեր (caustiques), կամ փորահատութիւն և անդամանհատական դանակ (bistouri). Լապէ ընտրեց առաջին կերպը, և այս տարի, 6 ապրիլի, ներկայութեամբ կոսըլէն, Լառէյ, Լըրէր, և Մօրիս բժշկապետաց պատուաքաղ կլող պատանին քլորակերպով (chloroforme) անզգայցուց:

Կիզողական գեղոց ներգործութիւնը բաւական չըլլալով լապէ բժշկապետը ճղբեց երիտասարդին փորը, և յետ լսաւ մը պնդելու կտրուածքը՝ ծակեց ստամիքսը մէկ հարիւրոդամէջը բացուածք. Քով ձախ ձեռքին ցուցամասը այն բացուածքէն ներս խոթեց և զգաց որ պատուաքաղը քիչ մը հեռուն արգիւտերէ : Զգուշութեամբ բռնեց զայն խորաշափ ունելիքով, կամացուկ մը ինքն իր վրայ դարձոց, և ակրաները

բացուածքին առջևն եկան, պղտիկ ճիգմալ տալով զուրս հանեց բոլորովին պատառաքաղը :

Հիմա այն վտանգաւոր գործողութեան ամենաեին նշան չէ մնացեր, բայց եթէ ի սկզբան ստամիքսական խըզի այլ մ'ունեցաւ, որ շուտով անցնելու վրայ էր : Հիւանդը կ'ուտէր կը խմէր սովորական առողջ մարդու մը նման, և ամենաեին ցաւ չէր զգար : Բոլորովին առողջացաւ թէ՛ բարյոյապէս և թէ ֆիզիկացաւ:

Լապէ վիրաբուժին կատարած անդամահատական այս գործողութիւնը պէտք չէ շիփոթել որովայնահատութեան ուրիշ զիպուածոց հետ, որ շատ անգամ յաջողած են: Լապէ մեծ արդիւնք է իր ըրած այս փորձովը մատակարարել այնպիսի ճշութիւն մը, որ մինչև հիմա անծանօթ էր որովայնահատութեան գործողութեանց մէջ : Նախապատրաստական քննութիւնները ընելով դիմէկի վրայ կրցաւ ինքն հաստատել ճիշդ կերպով, բաց' ի քանի մը հազարորդամէջը տարբերութեան՝ բրանձելու ճամբան, ապահովապէս համելի առարկային համենելու համար ձեմարանին առջև դրաւ նկարագիր մը, իբր ճարտարապետի մը ուրուազիծ, որով կը սահմանադրէ ամենայն ճշութեամբ թէ ինչ ճամբայ պէտք է ասկէ ետքը բռնեն վիրաբոյքք : Որովայնահատութեան գործողութիւնն, որ շատ վասագաւոր է, այսուհետև դիմին պիտի ըլլայ և անվանգ . իր կանոններն ունեցաւ, հիմա դասառական եղաւ . Առանց վարանելու կարելի է հանել ստամիքսէն օտար մարմին մը՝ որ մէջն ընկած ըլլայ :

Այս ամենը բաւական հետաքրքրական է, բայց օգտակարութիւնը չափաւոր է. վասն զի պատառաքաղ կլին այնպէս ստէպ հանդիփող դէպք մը չէ : Սակայն գաղղիքացի վիրաբոյքը մսածեց որ իր այս գործողութիւնը կը լայ փորձադրութիւն մ'ունենալ ինչպէս որ կարելի է ստամիքսէն օտար առարկաներ գուրս հանել, այսպէս ալ

Հիմա կարելի է նաև օտար առարկա, ներ ներս խոթել, Եթէ պատառաքաղ կլելու դէպը սովորական բան մը չէ, սակայն հիւանդութեանց ժամանակ հասարակ է զիազուածն շկրնալ կերակուր կլելու բերնէն վար: Արդէն գաղղիացի ուրիշ վիրաբոյժ մը ժամանակաւ առաջարկեր էր այսպիսի պարագայից մէջ որովայնահաստութիւն ընել սակայն բժիշկները չէին համարձակած այս բանիս: Հիմա որ Լապէ վիրաբոյժը դործադրելի և անվտանգաւոր ըրաւ այս կերպը, այսուհետեւ կարելի է կերակրել հիւանդներն՝ ուղղակի ստամփունդ մնունդ ներս խոթելով: Խնչպէս ամեն չարիք չներ հասնիր վնասելու համար, այսպէս ալշնորհիւ պատառաքաղ կլող երիտասարդին կարելի է ամեն տարի ազատել բաղմաթիւ անձինք անսուլդութեամբ մեռնելէ, անոնց ստամփունդ մէջ ուղղակի մնունդ մոցունելով:

Ասկէ երեք տարի մ'առաջ Ֆիորենցա քաղաքը Եցիստոս Զիպրիանի անունով բաւական ունելոր վաճառականի որդին, որ մարմնամարզական խաղերով կը զուարձանար, իրիկուն մը գիւնեառն գտնուելով, բարեկամացն հետ աճապարութեան վրայ կը խօսակցէր, վասն զի նոյն օրերն ալ աճպարարաց ընկերութիւն մ'եկեր էր Ֆիորենցա, և կը զարմացունէր զամենին իր ըրած խաղերովը Զիպրիանի ալ արիստրա, յանդուդն երիտասարդ մ'ըլլալով, ուղեց ցուցընելթէ ինքն ալ գիտէր կոկորդէն վար բան դրկել և փաքք ֆոնէ մեծկակ պատառաքաղ մ'առնելով կոկորդը խոթեց կոմին կողմանէ, սուր ծայրերն ակուաներուն մէջ սեղմելով գոցեց բերանը: Ստամփունդ ցնցմունք մը բերանը բացաւ, և պատառաքաղը կոկորդէն վար գնաց: Բարեկամները շուտով հիւանդանոց տարին զինքը, բայց արդէն պատառաքաղը ստամփունդ մէջն ընկեր էր, և հիւանդանոց գտնուող վիրաբոյժն ըսաւ թէ չէր գիտէր ինչ ընելիքը: Այս արտաքոյ կարդի

գէպըն համբաւեցաւ բոլոր Ֆիորենցա, և ալ աւելի արտաքոյ կարգի դէպէն էր տեսնել որ Զիպրիանի հանգիստ կը շրջագայէր, իրը թէ բան մ'եղած ըլլալոր: Դէքալարոյ Ռողադի անունով դաստու վիրաբոյժը շատ հոգ տարաւ այս եզական դէպէն վրայ, և Զիպրիանի յանձնեց ինքը զինքն այս եռանդուն և ճարտար արուեստագիտիւն ճեռքը, որ ետևէ եղաւ հնարք գտնելու որպէս զի կարող ըլլայ հանել ստամփունդ այն պատառաքաղըն, որ սկսեր էր սաստիկ ու դառն ցաւ պատճառել այն տարաբաղդ երիտասարդին: Առջի բերան այնպէս կարծուեցաւ թէ ամենէն յարմար կերպըն ըլլայ պատառաքաղը բերնէն հանելու փորձ ընել, ապահով ըլլալով որ զեռ և կանգուն կեցած ըլլայ ստամփունդն մէջ: Եւ ըստ այսմ Զիպրիանիին վրայ փորձեր ըրաւ, կոկորդն օտար մարմին խոթելով ու հանելով, որպէս զի վարձի չնեղուելու, և մասնաւոր խորաչափ գործիքով մը որ ծայրն ունելիք էր վիրաջանար փորձեց գուըս հանել ստամփունդ այն օտար մարմինը, սակայն չաղողեցաւ. և առաջին կարգի անուանի վիրաբուժներու հետ խորհրդակցելով որոշուեցաւ որ միակ հնարքն է՝ փորձել հանելու ստամփունդ այն օտար մարմինը՝ ճնպելով ստամփունդ. բայց այս հնարքը կրնար վտանգաւոր ըլլալ, անոր համար Զիպրիանի յանձն չառաւ որ ճըլլքն ստամփունդ, և թուզով Ռողադի վիրաբուժին խնամքը՝ գնաց յանձնուեցաւ ուրիշ վիրաբուժի մը բուշինի անունով, որ բարերար եղարար հիւանդանոցին բժշկապետն էր: Բաւշինի ճնքելու կամ հանելու գաղափարը մէկի թուզոց, միայն ինսամք տարաւ հանդարտեցունել սաստիկ ցաւերը որ երբեմն երբեմն կը նեղէին այն տարաբաղդ երիտասարդը, և արգելուլ որ պատառաքաղին բաղման բարձրութենէն առաջ եկած մետաղական թթուուտները շնչունաւորին զինքը, կամ թէ այնպիսի անախորժութիւն մը պատճառեն ստամփունդ որ կարող չըլլայ կերակուր ուտեղու: Փանի որ այս խնամոց տակն էր Զի-

սպանի, ձայն ելաւ թէ մեռած ըլլայ, սակայն ստոդ չէր և լրագիրք սուտ հանեցին այն ձայնը:

Անցեալ տարի Զիարիանի, որ 'ի սկըզ բան սաստիկ նիհարցեր էր, նորէն առաջին առողջութիւնը ձեռք ձկեց, և սկսաւ թատերաբեմի վրայ հասարակաց առջև նոյն խաղը կրկնել, որ իրեն մահացու եղեր էր: Կ'ըսէր թէ խորաշափ դործիքով կոկորդին մէջ եղած փորձերը վարժեցոցեր էին զինքը օտար մարմններ ընդունել կոկորդէն վար: Այնպէս որ ժողովուրդը տեսնելով իրեն ծաղրածելն ունեցած թշրւառութեանը վրայ, սկրսան տարակուսիլ թէ չըլլայ որ խարիէութիւն ըլլայ այն պատաստքաղին պատ-

մութիւնը, անոր համար հարկադրուեցաւ գու գուրս հանել բժշկաց վկայական ները վերջէն ուրիշ տեղուանք ալ զնաց Զիարիանի նոյն խաղերն ընելու համար, իսկ հիմա միորենցա կը կենաց:

Տարիին է 25 կամ 26, հասակաւ բարձր, կազմուածքով առողջ ու դէմքով խելահաւ: Մինչեւ հիմա պատառքաղն հորիզնական դրբութ կեցեր է ստամոքսին մէջ, և ինքը կըսէ թէ երբ չափը չանցըներ ուտելու խմելու, և չիյոդնիր, քիչ ցաւ կը զդայ և ուշ ուշ: Անոր համար սովորութիւն ըրեր է կամաց կամաց քալել ձեռքով ստամոքսը բռնած, որպէս զի ցաւ չզգայ:

## ՃԱՆՃ

Ճանճն ընդհանրապէս կը համարուի ձանձրացուցիչ միջատներէն մէկն, ուստի կէ անկարելի կ'ըլլայ մարդուս պաշտպանել ինքը զինքն ինչ ալ ընելու ըլլայ:

Երբ անոնք կ'աղտոտեն սենեկաց կահըը ու կարասիքը, ոսկեզօծ շրջանակները, երբ կ'ընկնին կաթին մէջ կամ ապարին մէջ, երբ արդեւք կ'ըւլան մեղի քուն ըլլալու իրենց շարունակ ազգալովը և հանգիստ չեն ժողովրա անդադար խայլթելավը, ձմեռը կը վենտուենք որ ապասէ զմեզ այս նեղացուցիչ թշնամիէն: և կը հարցունենք թէ ինչ բանի կը ծառայէ այս միջան որ այնչափ անհանգստութիւն կու տայ մեդի:

Այրդ ճանճն որ այշափ նեղութիւն կու տայ մեղի, ինքն ալ ունի, ինչպէս ամեն արարած որ կը չնչէ ու կ'ապրի երկիրս վրայ, պաշտօն մը կատարելու, և շատ կարեւոր պաշտօն: այնպէս որ պէտք է ներենթ իրեն մեղի շարունակ տուած նեղութեանց համար: Բւշագրութեամբ դիտանք ճանճ մը, որ յետ թը:

չըտելու առ ժամանակ մը կու գայ կը հանգչի: կը տեսնենք որ խել մը չարձմունք կը կատարէ, կատուի նման կը լրդուըստըկի ու կը զարդարուի, կամ թունոյ նման՝ որ փետուրները կը մաքրէ: Նախ ետևի թաթերը մէկմէկու հետ կը չփշիէ, ետքն անսնց իւրաքանչիւրն հետզհետէ մէկ թեխն վրայէն կ'անցունէ: ետքը կարգը կու գայ առջի թաթերուն, զանոնք ալ իւրարու հետ կը չփշիէ: ամենէն ետքը կը տեսնենք որ պատիճովը կ'անցնի բոլոր շրջուած մասերուն վրայէն:

Արգեօք այս շարժումները լոկ մաքրութեան համար կը կատարէ: Մինչ է հիմա այնպէս կը կարծուէր, բայց անդ զիացի հուշակաւոր քիմիագէտ մը կ'մէրալն (Emerson) անունով մօտերս ապացուցուց որ շատ տարբեր է այս բանիս պատճառը: Մանրացուցի տակ դնելով ճանճ մը, տեսաւ որ վիճան տեսակ մը լուիկներով ծածկուած էր, և ամեն ճանճի վրա ալ նոյն երեղիթն ստուգեց: Եսքէն դիտեց որ այս միջատները պատճնին իրենց մարմնոյն այն